ԵՐԲ ՊԱՀԸ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ Է...

Հարցազրույց սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆԻ հետ

— Հարգարժան Կարլեն Լևոնի, հուզող խնդիրները շատ են: Բայց Ձեզ ուղղվող իմ հարցերը կանոնիկ չեն լինելու: Մայր հայրենիքում տեղի ունեցած ողբերգությունը և աշխարհասփյուռ հայության օգնությունը, վերջին երկու-երեք տարվա ընթացքում, հատկապես այս ամիսներին կոմիտեի բեղուն գործունեությունը, որ հրաժարվել եք տարիներ ի վեր որդեգրած «եկան, տեսան, գնացին» հարթ ու հանդարտիկ աշխատաոճից. ահա դրանք, նաև այն մասին, որ ոչ մեծ կոլեկտիվով կարողանում եք լուծել այնքան հարկավոր ու հրատապ խնդիրներ: Երկրաշարժը, դրանից առաջ Ղարաբաղյան շարժումն ավելի բացեց սփյուռքահայության աչքերը: Գործունյա շրջանակների մարդիկ կամենում են Հայաստանում կառուցել հյուրանոցներ, հիմնել արտադրական ձեռնարկություններ: Իրենց տունն են ուզում հարստացնել: Սովոր ենք ասելու՝ մայր հայրենիքը միշտ էլ սատար է կանգնում, լուսատու ջահ է տարասփյուռ իր զավակների համար: Հիմա նույն հայրենիքի տեղը նեղ է, և հավաքական սփյուռքն է արթնացել ազգային մեծ ցավից: Այդպե՞ս է:

— Կոմիտեի աշխատանքը իրոք բազմազան է: Առաջին հերթին զբաղված ենք, անշուշտ, մշակութային կապերով, ինչին որ կոչված ենք ու պիտի ծառայենք: Բայց մշակութային խողովակի կողքին գոյություն ունի գիտական, մանավանդ, բժշկագիտականը: Հայաստանի բժշկական մակարդակի բարձրացման հարցն է դրված ամերիկյան, ֆրանսիական և մյուս երկրների գաղթօջախների բժշկական ուժերի օգնությամբ, որը նախատեսում է թե տեխնոլոգիայի և թե փորձի փոխանակում հատկապես երիտասարդ մասնագետների վերապատրաստման գործում: Վերապատրաստում, որ պիտի կատարվի արտասահմանի լավագույն կլինիկաներում՝ հայ բարձրորակ մասնագետների հսկողությամբ:

Պակաս կարևոր չեն գործարար շրջանների հետ մեր ունեցած կապերը: Արդեն երկու տարուց ավելի է, ինչ հրավերներ ենք ուղարկում սփյուռք և ընդունում բիզնեսի մարդկանց: Ես չէի ասի, թե մենք արդեն խոշոր հաջողություններ ունենք այս բնագավառում: Մեղավորը մենք ենք, թե մեր կոմիտեն և թե, մանավանդ, մեր բազմաթիվ ձեռնարկությունները, տնտեսական կազմակերպությունները, որոնք դեռևս պատրաստ չեն արտասահմանի գործընկերների հետ որևէ ձեռնարկում սկսելու: Դժբախտաբար, մենք մամուլով կամ հրապարակայնորեն հաճախ ենք ասում, թե արդեն ամեն ինչ պատրաստ է, բայց գործնական արդյունքը շատ քիչ է: Այնուամենայնիվ, մի քանի հարյուր բիզնեսմեններ արդեն եկել են Հայաստան, որոշ արձանագրություններ ստորագրված են, նույնիսկ կան պայմանագրեր համատեղ ձեռնարկություններ ստեղծելու մասին:

— Ձեզ ընդմիջեմ. բիզնեսմենները միայն հայե՞ր են:

— Կան նաև օտարներ: Օրինակ, մենք կարողացանք հրավիրել բիզնեսմենների, որոնք Աերոֆլոտի հետ միասին կնքեցին մի պայմանագիր: Մեր Աերոֆլոտը և այդ ընկերությունը համատեղ շահագործել են Լոս Անջելես—Երևան օդանավային գիծը: Լոս Անջելեսից Ցյուրիխ պիտի աշխատեն Պանամերիկյան ավիաընկերության ինքնաթիռները, իսկ Ցյուրիխից Երևան՝ մերը:

— Բանաստեղծ Վահրամ Հանյանը նույնպես օգնել է այս ձեռնարկումին, այդպե՞ս է:

— Այո, նա ևս այդ ընկերության պատասխանատու մարդկանցից է: Ես կարող էի նշել նաև Անգլիայի «Հեղտորոնս» ընկերության մասնակցությամբ մեզ մոտ կնքված մի պայմանագիր ևս, որով պետք է հաշվիչ տեխնիկայի համար համատեղ ծրագրեր արտադրվեն: Մեր մասնակցությամբ բավականին հաջող պայմանագրեր կնքվեցին Կալիֆոռնիայի հայ բժիշկների միության հետ, օրինակ. Երևանում մասնագետ պիտի վերապատրաստենք առաջին հինգ տարում: Դա խոշոր գործ է: Մեր մասնակցությամբ հաջող համաձայնագրեր ստորագրվեցին պետշինի և ամերիկյան շինարարական որոշ ընկերությունների ղեկավարների, մասնավորապես Ռոստոմ Բոյաջյանի հետ: Երևանում պիտի կառուցվեն մի շարք ձեռնարկություններ, դրանցից հատկապես պիտի նշել պլաստիկ խողովակների արտադրության ձեռնարկությունը: Դա մեծ կարևորություն ունի այսօր մեր ժողովրդական տնտեսության մեջ: Արժե նշել նաև զուտ գիտատեխնիկական համագործակցությունը, որով հնարավորություն ենք ստանում ունենալու ժամանակակից տեխնոլոգիա:

— Նորից ընդմիջեմ. փոքրիշատե ծանոթ լինելով կոմիտեի պատմությանն ու հատկապես վերջին երկու-երեք տարվա աշխատանքներին, ինձ այնպես է թվում, թե մշակութային կապ հասկացությունը մնալով այդպիսին, ասես նոր դաշտեր է փորձում յուրացնել: Իհարկե, դա ինքը կյանքն է թելադրում, այս պահին՝ մեր ապրած ողբերգական ժամանակը: Կարևորը, խնդրեմ, Հայրենիք—Սփյուռք կապերը: Եվ հետո՝ ասում են՝ իբր կոմիտեի անունը պիտի փոխվի, անվան հետ՝ նաև ուղղվածությունը:

— Մենք չենք բավարարվում միայն մշակութային կապերով, քանի որ ինքը՝ մշակութային կապն էլ այսօր այն չէ, ինչ առաջ էր: Սփյուռքի պայմաններում առանձին մարդիկ երբեմն այն կարծիքին են, թե մեր կոմիտեն զբաղված է միայն հյուրեր ընդունելով և ճամփելով: Ես ցավում եմ, որ այդ մարդիկ լավատեղյակ չեն: Նույնիսկ մշակութային բնագավառում այսօր գործունեության ալիքը շատ ավելի մեծ է և անչափելի է դարձել ոչ թե միայն հյուրեր ընդունելով և ճամփելով, այլև մանավանդ նոր և նոր զանգվածների հետ մեր կապերի հաստատմամբ: Խոսքը հատկապես վերաբերում է չեզոք զանգվածներին, որոնք մինչև այսօր գոյություն ունեցող սփյուռքի ավանդական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ազդեցության ոլորտից դուրս են ու միայն իրերի բերումով: Իրենց ենթակայական պայմաններից ելնելով, նրանք երբեմն պարզապես չեն ուզում կապվել գոյություն ունեցող ավանդական հաստատությունների հետ և մի տեսակ յուրովի ուղիներ են փնտրում հայրենիքի հետ կապվելու: Մենք պիտի տրամադրենք այդ ուղիները և փորձում ենք տրամադրել: Այդպիսի զանգվածները հատկապես շատ են Եվրոպայի և Արևմուտքի երկրներում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, ինչ-որ չափով Հարավային Ամերիկայում: Նման զանգվածներ Արևելքում գրեթե չկան: Արևելքում հայությունն ունի ավելի հին ավանդական կառույցներ: Այս երկրներում հայկական արմատները շատ ավելի խորն են: Ամերիկայի և Եվրոպայի հայկական արմատները սկսել են աստիճանաբար թուլանալ՝ կապված մի շարք հանգամանքների հետ, մանավանդ այնպիսի պարագաների, երբ բացակայում է, ասենք, ազգապահպան մի կարևոր, բայց կողմնակի գործոն: Արևելքում դա իսլամի գոյությունն է, որի շրջապատում հայությունն իր գոյապահպանության համար լրացուցիչ ազդակ ունի: Արևմուտքում, պարզ է, բացակայում է այս գործոնը: Արտաքինից գոյություն ունեցող ազատությունը, որևէ ազգային կամ որևէ դավանական խտրականության բացակայությունը ըստ էության ավելի նվազ ազգապահպան դեր են կատարում, քան խտրականության գոյությունը: Սա զարմանալի պարադոքս է, բայց այնպես է: Երբ դու ազատ ես, ապա քո պաշտպանական որոշ ազդակները թուլանում են: Հոգեբանությունը շատ կարևոր է, այն միշտ հենվում է մշակույթի վրա: Մշակույթն է, որ մարդկային զանգվածների, մարդկային հավաքականությունների համար հոգեբանություն է ստեղծում: Ազգային մշակույթն է ստեղծում ազգային հոգեբանություն: Երբ որ ազգային մշակույթը, որպես այդպիսին, դադարում է հայթայթվել տվյալ անձնավորության կամ հավաքականության համար, ապա նրա հոգեբանությունը դառնում է դյուրավ խոցելի: Զուտ ազգային հոգեբանության մասին է խոսքս: Ահա թե ինչու մշակութային կապերը խիստ կարևոր են: Փակագծերի մեջ կասեմ հետևյալը. սփյուռքի այսպիսի տարանջատվածության պարագայում շատ հաճախ լսվում է արտաքինից կարևոր մի գնահատական, թե Սփյուռքի կոմիտեն պետք է դառնա մինիստրություն, դադարի միայն մշակութային կապի կոմիտե կոչվելուց: Նա պետք է կոչվի գիտատեխնիկական ու մշակութային կապերի ոչ թե կոմիտե, այլ մինիստրություն: Չի կարելի գնալ այդպիսի քայլի: Ազգային գոյապահպանության արմատը, հիմքը, իսկ մեր հիմնական միտքը հենց այդ է, ազգային մշակույթն է, նրա հետ հենց ազգային կապը: Ուրեմն՝ հիմնական գիծը պետք է մնա մշակութայինը, որքան էլ որ այսօր մեզ՝ խիստ անհրաժեշտ է շեշտը դնել տնտեսական կապերի վրա: Որովհետև մենք կոչված ենք օգնել սփյուռքին հայրենիքի հետ կապի ճանապարհով, իսկ դա նշանակում է՝ հայրենի մշակույթի ճանապարհով: Որովհետև ազգային մշակույթը արտադրվում է միայն ազգային հողի վրա: Կարելի՞ է, արդյոք, արտասահմանում ոգեկան հայրենիքի միջոցով հայությունը պահպանել: Կարելի է, բայց ոչ երկար: Այդ երկարությունը միայն հայրենիքի միջոցով է ստացվում: Չի կարելի փոխել մեր կոմիտեի հիմնական կոչումն ու առաքելությունը և ոչ էլ դարձնել պետական մարմին: Հենց որ դառնանք պետական մինիստրություն, այդ օրն իսկ մեզ օտար պետությունները կզրկեն իրենց մոտ մեր հայրենակիցների հետ շփվելու իրավունքից և, բնականաբար, շատ հարցեր կփակվեն մեկեն: Բայց, ինչպես նշեցի, նրա գործունեության լայնացումն անհրաժեշտ է մանավանդ այսօր, վերակառուցման պայմաններում: Ոչ թե բավարարվել հյուր ընդունել-ճանապարհելով, այլ որքան հնարավոր է լայնորեն աջակցել սփյուռքին հայեցի իր կեցությունը զարգացնելու հարցում և, որքան հնարավոր է, լայնորեն ներկայացնել սփյուռքը Հայաստանին, որպեսզի հայը ճանաչի իր պոտենցիալ ուժերը, իր եղբայրակիցների վիճակը, հասկանա՝ ինքը ամբողջական ժողովուրդ է, դժբախտաբար, մի մասն ունենալով դրսում, և ինքը հզոր է նաև այդ մասով:

— Օրախնդիր հարցերն էլ ամուր շղթայի օղակ են կազմում: Կոմիտեն այսօր ի՞նչ է անում՝ կապված սփյուռքի երիտասարդության հետ:

— Մեզ համար այսօր երիտասարդությունը կետ-նպատակ է մեր գործունեության: Անում ենք մեր կարելին՝ սկսած մանկապարտեզի հասակից մինչև միջնակարգ դպրոցների և բարձրագույնի ուսանողության համար: Առաջին հերթին, անշուշտ, լուծված է դասագրքերի հրատարակության հարցը: «Հայֆիլմի» հետ միասին արևմտահայերենով կինոֆիլմեր ենք նկարահանում երեխաների համար: Կարևոր եմ համարում նաև մեծ քանակությամբ երիտասարդական խմբերի հրավերը Հայաստան: Կան առանձին ինքնագործունեության՝ երգի, պարի, ասմունքի խմբեր: Գալիս և Հայաստանի բեմերում ելույթներ են ունենում: Այսպիսով, և սփյուռքին ենք աջակցում մշակութապես, և Հայաստանն է սկսում ճանաչել սփյուռքին: Ինքնագործունեության բազմաթիվ խմբերի ելույթները տեղ են գտնում նաև Հայաստանի հեռուստատեսային հաղորդումներում: Այսպիսով,՝ մշակութային խողովակն իր մեջ ներառնում է ազգային կեցության հիմքերը հաստատող գործունեություն, որը կարծեմ թե ամենակարևորն է այս բնագավառի մեջ: Աստիճանաբար շատ ավելի ուժեղ և աշխույժ է դառնում հայ սփյուռքի ազգային կյանքը:

— Հայ մարդու մեջ հայկականության արթնացումը Դուք ինչո՞վ եք պայմանավորում:

— Հարցը տարողունակ է, գիտական առանձին ուսումնասիրության կարոտ: Փորձեմ հակիրճ բացատրել, թե ինչ ազդակներ էին, որոնց երրորդ, չորրորդ սերնդի մեջ արթնացրին հայկականությունը: Սա, անշուշտ, զարմանալի մի երևույթ է, որովհետև թվում էր, թե երկրորդ սերնդից հետո այլևս պիտի գնանք դեպի հայկականության կորուստ: Բայց այսօր շատ մարդիկ սկսում են մոտենալ իրենց ազգային արմատներին: Ընդ որում, այս երևույթը սկսվել էր դեռ մինչև Ղարաբաղյան շարժումը, մինչև երկրաշարժը: Ուրիշ հարց է, որ Ղարաբաղյան շարժումը, մանավանդ, և հետո երկրաշարժը որակական բնույթ տվեցին այս անցումին: Ավելին. ձևավորված և ինչ-որ տեղ գիտակցական գործողություն եղավ օտարախոս հայության՝ դեպի իր արմատները անցումի համար: Այս անցումը կատարվում է այսօր, մեր աչքի առջև: Պատճառներից մեկը Մերձավոր Արևելքի գաղութների քայքայումը և այդ հաշվին Արևմուտքի հայկական գաղութների ուռճացումն է՝ ազգային կյանքի վերազարթնումով հանդերձ: Նկատելի է մեծ աշխուժություն Հարավային Ամերիկայում: Այո, սա բացատրելը շատ ավելի դժվար է, որովհետև հիմա ոչ թե երկրորդ-երրորդ, այլ չորրորդ, հինգերորդ սերունդն է վերադառնում դեպի իր հայկականությունը, երբ հայը չգիտի հայերեն, բայց երեխան արդեն գիտի, ուզում է, ձգտում է, որ սովորի իր նախնիների լեզուն:

— Հիշենք Մայքլ Արլենին: Նա այսօր էլ չգիտի հայերեն, բայց «վերադարձը» տեսնում ենք բոլորս:

— Այո, հենց Արլենի պարագան: Նա մինչև այսօր չգիտի հայերեն: Սրանից մի տասնհինգ տարի առաջ Արլենը եկավ հայկականություն, երբ «Անցում դեպի Արարատ» իր գրությունը լույս աշխարհ բերեց: Արլենի համար նկատելի էր սեփական արմատների որոնումը: Արլենի պարագան կապվում է ամերիկյան գրականության, ամերիկյան իրականության մեջ շատ հետաքրքրական հասարակական, հանրային երևույթով: Կա մի պահ, երբ ամերիկյան գրականությունը սկսեց որոնել իր ազգային արմատները: Եվ Արլենն ինչու պիտի չորոներ իր արմատը: Նա դարձավ ամերիկյան գրականության մասնակից՝ որպես այդ երևույթի արտացոլողներից մեկը: Թվում էր, թե Ամերիկայում արդեն գոյություն չունեն բազմազգ ժողովուրդներ, և բոլորը ամերիկացիներ են և հանկարծ յուրաքանչյուրը՝ էթնիկական տարրի մտավորականությունը, Ամերիկայի ստեղծման 200-րդ տարեդարձի շեմին, սկսեց որոնել իր սեփական ազգային արմատները: Նեգրերը, կոստարիկացիները, իտալացիները և այլ ազգեր, այդ թվում և հայերը: Խնդրեմ, Մայքլ Արլենը գրեց գիրք-համփորդություն իր արմատների, իր Արարատի մասին: Դեպի Արարատ. ամենաճիշտ արմատը: Մայքլ Արլենը Ղարաբաղյան շարժման առիթով իր երկրորդ մղումն ունեցավ, որն իրականացրեց երկրաշարժից հետո: Եվ պատահական չէր, որ իր խնդրանքով միասին այցելեցինք Ղարաբաղ, և ես տեսա, թե նա ինչպես է ապրում իր ժողովրդի ճակատագիրը: Իմ ուղղակի հարցին, թե նա ինչպես է ըզգում իր հայկական արմատը, նա ասաց, որ, անշուշտ, իր համար շատ դժվար է, բայց վստահ է, որ վերադարձին պիտի մի նոր բան գրի, իր արմատներին հանդիպելու երկրորդ ալիքի վերաբերյալ պիտի գրի:

— Արցախ այցելության ժամանակ Ստեփանակերտում ձեզ հյուրընկալել է հայաշունչ մի օջախ: Հետաքրքիր է, թե Արլենն ինչպե՞ս էր նայում հայոց այդ տանը, երեխաներին: Ուշ գիշերով ե՞ք գնացել...

— Այո, այո: Սրտաբաց մարդիկ էին տանտերերը: Ունեին երկու աղջիկ: Շատ սիրունիկ աղջիկներ էին: Անկողնուց ելան, հենց գիշերանոցով կանգնեցին մեր դեմ և հինգ-յոթ տարեկան քույրիկները միասին արտասանեցին «Ես իմ անուշ Հայաստանի...»-ն: Արլենը չգիտեր ինչի մասին է: Թարգմանությամբ հասկացավ, որ Չարենցի հայտնի բանաստեղծությունն է: Ավելի հուզվեց: Հասկացավ, որ այս երեխաները հենց հիմա չեն ուզում կորցնել հայկական արմատը:

— Մայքլը չգիտի հայերեն, Շառլ Ազնավուրը գիտի: Ազնավուրի հետ դուք մեկնել եք աղետյալ շրջաններ:

— Բնական է, որ Ազնավուրի մոտ շատ ավելի շեշտված է հայկական զգացումը: Եվ Ազնավուրի հետ շփումների ընթացքում ավելի անմիջական էիր դիտում այս ամենը: Արլենի համար գոյություն ուներ լեզվական խոչընդոտը: Շփումը ժողովրդի հետ թարգմանչի միջոցով պիտի լիներ: Իսկ Ազնավուրը շփվում էր, Ազնավուրը բոլորի հետ խոսում էր և շատ լավ հայերեն էր խոսում: Նրա համար խնդիր չկար: Ահա այս տարբերությունները: Երկուսն էլ զգում են պատասխանատվություն ներկա սերնդի և ապագայի առջև՝ իրենց հայ լինելու համար:

— Իրար ճանաչո՞ւմ են:

— Չեմ կարող ասել, բայց... Հիմա բոլոր հայերն էլ իրար ճանաչում են, ճանաչում են մայր Հայաստանը, նրա վերքերի բուժման համար անում են ամեն ինչ: Պիտի շնորհակալ լինենք: Շնորհակալ պիտի լինենք ոչ միայն հանրահայտ այս արվեստագետներին, այլ բոլո՛ր-բոլոր սփյուռքահայերին, գաղութ առ գաղութ, տուն առ տուն:

— Մեր ընթերցողները քիչ գիտեն սփյուռքում գործող հայկական առանձին կուսակցությունների, խմբավորումների մասին:

— Ես կարող եմ ասել, որ քաղաքական բոլոր խմբավորումները, ուղղությունները, կուսակցությունները ոչ միայն երկրաշարժի առիթով, այլ այս վերջին մեկ տարվա ընթացքում, որպես հավաքական կազմակերպություններ (նրանց մեջ անհատներին և նույնիսկ մամուլի առանձին օրգաններ նկատի չունեմ), իրենց դրսևորեցին լավագույնս միավորելով իրենց գործողությունները՝ Հայաստանի անցյալ տարվա քաղաքական ամբողջ կացությունը ճիշտ արձագանքելով: Իսկ ի՞նչ է նշանակում ճիշտ արձագանքել: Ես միանգամայն համամիտ եմ այն Դիմումին, որ արեցին սփյուռքի երեք ազգային կուսակցությունները: Նրանք միանգամայն ճիշտ գտնելով հայ ժողովրդի պահանջատիրությունը, խստիվ դատապարտում էին անջատողական կարգախոսները, ճշտորեն տեսնելով, թե ամեն մի հայ մարդ, որ նման քայլի առջև է կանգնում, գոնե առնվազն մեկ անգամ իր ապրած վայրի քարտեզին աչք գցի՝ տեսնելու համար, թե ինչ է իր ուզածը: Միևնույն ժամանակ ճիշտ եմ գտնում նրանց հարցադրումը, թե չի կարելի երբեք դրժել ռուս ժողովրդի հետ բարեկամությունը, որը նույնպես մեր ազգային գոյատևության կարևոր պայմաններից մեկն է: Այս հողի վրա, ինչպես նաև հետագայում, մանավանդ երկրաշարժի առիթով, որոշակի միասնական գործողությունների շարժում ստեղծվեց սփյուռքում հայրենիքին օգնության հասնելու, հայրենիքի հոգսերը կիսելու միասնական շարժում: Դրան նպաստեցին նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի և Մեծի տանը Կիլիկիո կաթողիկոսի միասնական գործողությունները թե՛ Էջմիածնում, ուր նրանք հանդիպեցին և թե՛ ԱՄՆ-ում, ուր եղան օգնություն ապահովելու առումով:

— Իսկ ինչպե՞ս եք գնահատում մեր հանրապետության իշխանությունների բռնած դիրքը այս հարցում:

— Սեպտեմբերյան պլենումին ընկեր Ս. Գ. Հարությունյանը կարևոր զեկուցում ներկայացրեց, կարևոր հարցեր առաջադրեց: Հարցերից առաջնային եմ համարում երկու լեզուների մասին խոսքը: Արևմտահայերենի մասին նաև արտահայտվեց, առհասարակ հայ լեզվի մասին արտահայտվեց, որով պետք է մեր լեզուն իր արժանի տեղը գտնի հայոց կյանքի մեջ ամենուրեք: Շեշտում եմ ամենուրեք բառը, նկատի ունենալով ոչ միայն Խորհրդային Հայաստանը և Հայ Սփյուռքը, այլև Խորհրդային ուրիշ հանրապետություններում ապրող հայության իրավունքը սեփական մշակույթը զարգացնելու և իր ազգային կեցության հարցերը լուծելու իմաստով: Ես կարևոր եմ գտնում նաև այն միտքը, թե մենք պետք է ղեկավարվենք համամարդկային արժեքները գնահատելու սկզբունքից և անպայման, բնականաբար, լույս աշխարհ բերելով արվեստի, գրականության այն բոլոր կարևորագույն գործերը, որոնք ունեն համազգային, ինչու չէ համամարդկային նշանակություն, անկախ այն բանից, թե դրանց հեղինակները որևէ քաղաքական կուսակցության կամ հոսանքի պատկանե՞լ են, թե՞ ոչ: Սեպտեմբերյան պլենումը շատ հարցերի սկզբունքորեն պատասխան է տվել: Մենք շատ անուններ ունենք վերադարձնելու ժողովրդին: Հանիրավի մոռացված, ժողովրդից օտարված հեղինակներ ունենք: Պետք է տպագրել նրանց ստեղծագործությունները անկախ նրանց քաղաքական պատկանելությունից, հայացքներից: Պիտի ժողովուրդը լավ ճանաչի, ճիշտ ճանաչի թե ո՞վ է, ասենք, Նիկոլ Աղբալյան գրականագետը մեր գրականության, մեր իրականության համար, մեր հանրային մտքի պատմության, մեր մշակույթի պատմության և, վերջապես, մեր գրականության պատմության համար: Ես լայն վերցրեցի՝ հանրային միտք, հանրային մշակույթ, որովհետև Նիկոլ Աղբալյանը որպես գրականագետ գրականագիտության պատմության մի կարևոր օղակ է կազմում: Նրա դրույթներից շատ-շատերն այսօր էլ հնչում են թարմ, հնչում են միանգամայն ինքնատիպ: Նիկոլ Աղբալյանը պիտի ներկայացվի որպես այդպիսին: Նիկոլ Աղբալյանը 30-ական թվականների վերջերին սկսեց պնդել, որ պետք է դադարեցնել Խորհրդային Հայաստանի դեմ քաղաքական հակամարտությունը և անցնել մշակութային գործունեության, նոր սերունդը դաստիարակել հայրենիքի նկատմամբ ոչ թե ոխ ու թշնամանքի, այլև հայրենիքն ընկալելու, հայրենիքով սնվելու, հայրենի մշակույթով կերակրվելու գաղափարներով: Եվ դա դուրս չեկավ իր իսկ կուսակցության որոշ ղեկավարների:

— Երբ նայում եմ մեծ մաեստրոյի՝ ամերիկահայ քանդակագործ Խորեն Տեր-Հարությանի ստեղծագործությունները, Երևանում կերտած և օդանավակայանում դրված «Վերածնված Հայաստան» քանդակը, միտք եմ անում՝ սփյուռքում շատ կան արվեստագետներ, որոնք կցանկանան իրենց արվեստի խոսքն ասել մայր հայրենիքում: Ես նկատի ունեմ ոչ միայն տարաշխարհում ծնվածներին, այլ նաև հանգամանքների բերումով հայրենիքից գնացած արվեստագետներին:

— Պրոֆեսիոնալ արվեստի բոլոր բնագավառներում մենք շնորհալի մարդիկ շատ ունենք: Դա մեր ազգային հարստությունն է: Այժմ ես կարող եմ ասել, որ մեր կոմիտեն կուլտուրայի մինիստրության հետ համատեղ մշակում է մի ծրագիր: Նպատա՞կը. բոլոր պրոֆեսիոնալ կատարողները պետք է աստիճանաբար և հերթով հրավիրվեն Հայաստան՝ հանդես գալու մեր բեմերից, որպեսզի մեր ժողովուրդը նրանց ճանաչի: Կան նաև ուժեր, որոնք արդեն, բնության օրենքով, ողջ չեն, բայց համաշխարհային անուն են հանել: Օրինակ, ամերիկյան քանդակագործ Նաքյանի մասին է խոսքս, որի մասին հայությունը բնավ գաղափար չունի: Նրա արվեստին նվիրված կինոֆիլմ ունենք մեր ձեռքի տակ, այն տրամադրել ենք հեռուստատեսությամբ ցուցադրելու: Կան տաղանդավոր երիտասարդներ, որոնց պետք է աստիճանաբար հայրենիք բերենք: Կանադայից հրավիրեցինք նկարիչ Արմանդ Թաթոսյանին և ապրելու, աշխատելու լավ պայմաններ ստեղծեցինք: Նա արդյունավետ աշխատեց: Արմանդ Թաթոսյանը Կանադայի արքայական արվեստից ակադեմիայի փոխնախագահն է:

Պրոֆեսիոնալ արվեստի հետ կապվելը մեր մշակութային կապերի կարևոր ձևերից մեկն է: Հայաստանից տարբեր տարիների ընթացքում մեկնած քաղաքացիների մեջ, գաղտնիք չէ, կան պրոֆեսիոնալ արվեստագետներ: Ես հիմա պիտի հիշեմ քանդակագործ Արտո Չաքմաքչյանին, ջութակահար Ժան Տեր-Մերկերյանին, խմբավար Օհան Դուրյանին և շատ շատերի, որոնք գնացել են: Հիմա մեր ծրագրի կարևոր կետերից մեկն է, որ նրանք չկտրվեն իրենց ազգային արմատից:

— Վերադառնանք կրկին «դրսի» սփյուռք, հիշենք հայրենասեր մեր գաղութներն ու Հայոց Բարեգործականը՝ իր ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանին, մեր ազգային ողբերգությունը և սփյուռքահայության կարեկցանքը, ասես հենց իրեն հանելու, իրեն փրկելու պատրաստակամությունը:

— Բարեգործականի մասին, անշուշտ, պիտի խոսենք: Նա իր մասնակցությունը բերեց ու բերում է աղետյալների օգնության հարցում: Բարեգործականի անունից 7—7,5 միլիոնի հանգանակություն կատարվեց, որի մեջ իր լուրջ մասնակցությունը բերեց ինքը՝ Ալեք Մանուկյանը: Գիտեք, Բարեգործականը հայրենասիրական կազմակերպություն է, որն իր ուսերին է առել սփյուռքի տարածքում գործող շատ կրթական, մշակութային հաստատությունների և բազում այլ հոգսեր: Արժե մի անգամ առանձին խոսել միայն Բարեգործականի, նրա անցած ճանապարհի, կատարած մեծ ու հայանպաստ գործերի մասին: Բայց հիմա ես կասեմ, որ ամբողջ սփյուռքն է ապրում իր ժողովրդի ողբերգությամբ: Արդեն մեկ միլիոն հասնող ամերիկահայ գաղութից մինչև մի երկու հայ ընտանիք ունեցող Սինգապուրը: Կարելի է մի ամբողջ ցուցակ հրապարակել, երբ մարդիկ իրենց սեփական ցավի, վերքի ձևով ընկալեցին հայրենիքի հետ կատարվածը և անմիջապես փութացին կամ իրենց նյութականը, կամ բարոյական աջակցությունը բերելու այստեղ: Դրանց թվում և գրողներ են, և բիզնեսմեններ են, և արվեստի գործիչներ են, և հանրային, հասարակական, կուսակցական գործիչներ են և այլն, ընդ որում՝ բոլոր գաղթօջախներից: Ավստրալիայից մինչև Բեյրութ, մինչև Լոնդոն, Ստոկհոլմ, Արգենտինա, Բրազիլիա, Ամերիկա և այլն, և այլն: Մտովի պատկերացնենք, թե գոյություն ունի սփյուռքահայ գաղթօջախների քարտեզ՝ մի քանի հարյուրից, մի քանի հազարից մինչև մեկ միլիոնի հասնող հայ համայնքներով: Բոլոր շրջանակներից, տարբեր բարեսիրական միություններից, այդ թվում՝ թե Բարեգործական, թե Հայ օգնության միություն, եկան և իրենց հետ բերեցին մեծ օգնություն: Այնպիսի կազմակերպություն, ինչպիսին հայկական համագումարն է, նույնպես եկավ իր լուրջ օգնությունը բերելու: Մամուլում բավականին նյութեր են տպագրվել ու շարունակում են տպագրվել ինչպես Երկիր մոլորակի, այնպես էլ սփյուռքահայ մեր մարդկանց անգնահատելի օգնության մասին: Ուրեմն՝ մեր զրույցը կարող է միայն փոքրիկ լրացում լինել և օգտվելով առիթից բոլորին պետք է հայտնել խոր երախտագիտություն և շնորհակալություն: Ամբողջ աշխարհը, տարբեր դավանանքի, կրոնի, համոզմունքի տեր երկրներ են օգնում Հայաստանին: Երկիրը դարձել է գթասրտության անսպառ դաշտ և ինչպե՞ս կլինի, որ հայը հային չօգնի...

Զրույցը վարեց՝
Հրաչյա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԸ